

Դատավորը խախտեց Վարդգես Գասպարիի լաված լինելու իրավունքը

Անցյալ տարվա դեկտեմբերի 2-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի այցի կապակցությամբ Երևան քաղաքի Ամիրյան փողոցում խաղաղ երթի միջոցով Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության դեմ իրենց դժգոհությունն ու անհամաձայնությունը հայտնող քաղաքացիների ակցիան ոստիկանների կողմից արգելվեց, չնայած քաղաքապետարանն ու ոստիկանությունն իրազեկված էին հավաքի ու երթի մասին:

Այդ օրը տարածքում մի քանի տասնյակի հասնող ոստիկաններ են եղել, որոնք գերազանցել են հավաքի մասնակիցների թիվը: Խաղաղ ցուցարարների նկատմամբ անհամաչափ ուժ կիրառելով, ումանց, մասնավորապես՝ Վարդգեզ Գասպարիին ձեռնաշղթաներ հագցնելով՝ ոստիկանները նրանց մեքենայով տարել են ոստիկանության բաժին: «Բերետավորներն առաջինը ինձ հափշտակեցին-պոկեցին գետնից, փախցրին ժողովրդի միջից և տարան-շպրտեցին ոստիկանական մեքենան այն պահին, երբ դեռ Օսիկյանը «բանակցում էր» ցուցարարների հետ: Ձեռնաշղթաներն այնքան ձիգ էին, որ օղակներն ուղղակիորեն սեղմում էին դաստակիս ոսկորները: Դա ակնհայտ այդպես արեցին ցավ պատճառելու նկատառումով: Ոստիկանները պահանջեցին իմ ոտքով իջնեմ և մտնեմ բաժին, սակայն քանի որ պատշաճ կարգով ինձ որևէ պահանջ, առավել ևս օրինական պահանջ չէր ներկայացվել, ես չկատարեցի նրանց թելադրանքը: Դրանից հետո մի քանի հոգի բռնեցին ոտներիցս և ձեռներիցս և մոտ 40-50 մետր քարշ տալով՝ տարան բաժին, այնտեղից էլ մի հարկից մյուսը: Ամբողջ այդ ընթացքում քաշքշվում էի դետուդեն և գոռում ձեռնաշղթաների պատճառած ցավից: Իսկ ոստիկանները, ակնհայտ հեզնական ժպտալով, ասում էին «նորմալ», նրանցից մեկն էլ ասաց՝ «Բա որ ռուսական ոստիկանների ձեռն ընկնես ինչ կանես»,-ոստիկանների անմարդկային, ստորացնող վերաբերմունքի մասին է պատմում քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարին:

Եվ Գասպարին, և մյուս ակտիվիստներն ընդամենը ցանկացել են բողոքի ակցիայի շրջանակներում հավաքի և խոսքի ազատության իրենց սահմանադրական իրավունքներն իրականացնել, բայց ոստիկանները ոտնահարել են այդ իրավունքները: Նրանց նպատակը խաղաղ հավաքը վիժեցնելն ու խափանելն էր, ինչն էլ իրականացրել են ապօրինի գործողությունների միջոցով. խաղաղ հավաքի մասնակիցներին բաժանմունք տեղափոխելիս չեն ներկայացել նրանց, չեն հայտնել իրենց պաշտոնը, կոչումը, անուն-ազգանունը, ակցիայի անցկացումն արգելելու, ապա նրանց ազատությունից զրկելու իրավական հիմքերը, տեղում չեն ճշտել նրանց ինքնությունը, չեն փորձել կազմել ենթադրյալ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն: Նաև՝ անձամբ Վարդգես Գասպարիին չեն բացատրել նրան ազատությունից զրկելու հիմքերն ու պատճառները, նրա իրավունքներն ու պարտականությունները: Նրան անձնական զննության են ենթարկել, մոտ 4 ժամ պահել անազատության մեջ, որի ընթացքում Գասպարին չի կարողացել իր կամքով լքել ոստիկանական բաժանմունքը: Չի ապահովվել պաշտպան ունենալու նրա իրավունքը: Հակառակ նրա պահանջին՝ որևէ փաստաթուղթ, այդ թվում ոստիկանությունում ազատագրվման փաստը հաստատող կամ մարմնական վնասվածքի համար դատաբժշկի ուղեգիր չի տրամադրվել: Իր պահանջը գոնե արձանագրած լինելու նպատակով Գասպարին այնուհետև գրավոր դիմում է ուղարկել ոստիկանությանը՝ պատվիրված փոստով: Ձգձգումներով ի վերջո տրամադրվել է դատաբժշկի ուղեգիր, և դեպքից նույնիսկ 7 օր անց զննությամբ արձանագրվել են նրա մարմնական վնասվածքները: Ավելին, քանի որ արտաքին տեսանելի վնասվածքից բացի տուժողի մոտ առկա է եղել ձախ ձեռքի բթամատի ֆունկցիոնալ խանգարում, դատաբժիշկը նրան նաև մասնագետ բժշկի մոտ փորձաքննություն անցնելու ուղեգիր է տվել: Հիմա էլ՝ դեպքից ավելի քան 7 ամիս անց, Գասպարիի ձեռքի ֆունկցիոնալ գործունեությունն ամբողջությամբ վերականգնված չէ, շարժումներ անելիս զգալի են ցավեր ձախ ձեռքի բթամատի և դաստակի շրջանում:

Այս բոլոր ապօրինություններից հետո դեռ մի բան էլ դեպքից 2 ամիս անց ուստիկանությունն է Վարդգես Գասպարիի դեմ հայց ներկայացրել դատարան՝ նրան վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով՝ պատճառաբանելով, թե չի կատարել ուստիկանության ծառայողի օրինական պահանջը: Սակայն ուստիկանության հայցի հիման վրա երրորդ վարչական գործով Գասպարիի շահերը դատարանում ներկայացնող «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան կազմակերպությունը հակընդդեմ հայցով պահանջ է ներկայացրել դատարանին՝ ոչ իրավաչափ ճանաչել ուստիկանների միջամտող գործողությունները, այդ թվում՝ Վարդգես Գասպարիի կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, խաղաղ հավաքների ազատության, ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության, խոշտանգման, նվաստացնող կամ անմարդկային, խտրական վերաբերմունքից զերծ մնալու, ձերբակալման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքների միջամտող:

Վարչական դատարանում՝ դատավոր Արծրուն Միրզոյանի նախագահությամբ, սեպտեմբերի 26-ի նախնական դատական նիստում հայցադիմումի և հակընդդեմ հայցի առարկաներն ու հիմքերը պարզելուց հետո դատավորը սանկցիա կիրառեց Վարդգես Գասպարիի նկատմամբ՝ նախազգուշացում՝ պատճառաբանելով, որ դատարանի հետ պետք է կանգնած հաղորդակցվել: Միաժամանակ դատավոր Միրզոյանը պատասխանողին գրկեց նաև սրա վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու իրավունքից և չլսեց Վարդգես Գասպարիի պատճառաբանությունները վերջինիս կողմից դատարանի հետ նստած հաղորդակցվելու վերաբերյալ: Գասպարին ու նրա ներկայացուցիչը լքեցին նիստերի դահլիճը՝ արձանագրելով դատավորի այս խախտումը և միաժամանակ անիմաստ համարելով դատական նիստերի դահլիճում ֆիզիկական ներկայությունը այն դեպքում, երբ դատարանը արգելում և հնարավորություն չի ընձեռում արտահայտվելու և դիրքորոշում հայտնելու: Ինչպես պատասխանողի ներկայացուցիչ, «Իրավունքի Եվրոպա միավորում» կազմակերպության իրավաբան Սերգեյ Գրիգորյանն է նկատում, ձևական իրավունքի խախտմամբ չեն կարող սահմանափակվել անձի կարևորագույն իրավունքները, մասնավորապես՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսացող արդարադատության մատչելիության իրավունքը: «Չի կարող կողմը զրկվել դատարանում լսվելու, կարծիք, դիրքորոշում արտահայտելու իրավունքից՝ դատավարական ձևական իրավունքի խախտման համադրությամբ: Չէ, որ կողմին լսելուց հետո միայն կարող էր պարզ լինել Գասպարիի դատարանի հետ նստած հաղորդակցվելու պատճառները, մի գուցե Գասպարին միջնորդություն կներկայացներ դատարանի հետ նստած հաղորդակցվելու վերաբերյալ, նույնիսկ նման միջնորդություն անելու հնարավորություն չընձեռնվեց Գասպարիին: Սա մենք դիտարկեցինք որպես լսված լինելու իրավունքի խախտում», - նշում է Սերգեյ Գրիգորյանը:

Այսպիսով, դատարանը նման պայմաններում՝ փաստացի հնարավորություն չընձեռելով պատասխանողին օգտվելու իր դատավարական իրավունքներից, պատասխանողի և նրա ներկայացուցչի բացակայությամբ շարունակել է նախնական դատական նիստը և համարելով այն դատաքննության նախապատրաստված նշանակել է դատաքննություն:

Ադրինե Թորոսյան